« չուեալ եկին ի յԱխսարայ, որ է ի մէջ Հաշտար-
« խանու և Ղազանու. ոմանք գնացին ի Ճուղայ,
« ոմանք ի Վան, և այլք ի Սիս։ Եւ որք յԱխսարայ
« եկին, հրաման առեալ ի Թաթար խանէն բնա-
« կեցան անդ, ոչ բազում ժամանակս, որ էր զայս
« ՉԽԸ (1299)»։

Յիշատակարանիս խօսքերէն կը հետևի որ՝ յետ կործանման Անւոյ ի Զարմա-Խանէ (1239) բազմութիւն Անեցւոց անցել են ի Թաթարաստան, յընթացս 60 տարիներու, և անդ միշտ նեղութիւն կրելով Թաթար իշխեցողաց ձեռքէն, ազատութեան մի հնարք գտնելու աշխատել են, և « անդ բնակեցան ոչ բազում ժամանակս, որ էր զայս ՉԽԸ (1299)»։ Թէպէտ մթին է սակաւ մի յիշատակարանիս տուած բացատրութիւնը, այլ ես այնպէս կը հասկնամ որ 1299 էն սկսել են Աքսէրայցի հայերը բանագնացութիւնը ունենալ Կաֆայեցի ազգայնոց հետ, և այդ բանագնացութեանց հետևանք եղած է բիւրաւորաց Գաղթը ի Կաֆա 1330 ին, վասն զի կը յարէ յիշատակագիրը. « Մինչ նե-
» ղեալ եղեն ի Թաթարաց դեսպան յղեն ի Ղրիմ
» առ իշխանն Ջինիւիզայ »։

Գենուացի իշխանին անունը չի դներ գրողը, առ որ ուղղեալ են Աքսէրայցի հայ դեսպանք, այլ որովհետև նոյն միջոցին երկու իշխեցողք[1] կը յիշուին ի Կաֆա, Ալբերդոյ և Կոռադոյ, սոցամէ միոյն իշխանութեան միջոց անշուշտ, եկած են հայ դեսպանք ի Կաֆա և պայմաններով դաշինք դնելէն

1. Ըստ ցուցակի պրոֆեսսոր Իւրգևիչի Alberto Mallone 1297 ին ընտրուած և Corrado de Roccio 1316-1332։